ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.03.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2022/84

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

Ա/Ձ Սոնիկ Աթայանի ներկայացուցիչ՝ Ա. Հովհաննիսյանի (լիազորագիր՝ տրված 07.03.2022թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.02.2022թ. թիվ 26/26-1/3411-2022 գրությամբ Ա/Ձ Սոնիկ Աթայանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի 04.02.2022թ. թիվ 4 և 18.02.2022թ. թիվ 6 գրությունների հիման վրա, 28.02.2022թ. թիվ 26/26-1/3411-2022 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Սոնիկ Աթայանին (հետայսու նաև՝

Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Սոնիկ Աթայանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Սոնիկ Աթայանի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ա/Ձ Սոնիկ Աթայանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/84 ընթացակարգի շրջանակներում 07.03.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով ներկայացրել է Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի 24.02.2022թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/14 ծածկագրով որոշումը:

3. <u>«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 04.02.2022թ. թիվ 4 և 18.02.2022թ. թիվ 6 գրություններով հայտնել է հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար իրականացված ՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02 ծածկագրով գնման ընթացակարգի 6-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված Ա/Ձ Սոնիկ Աթայանը հրաժարվել է պայմանագրի կնքումից /գրությունը կցվում է/:

Խնդրում ենք Ձեր միջնորդությունը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ա/Ձ Սոնիկ Աթայանին ներառելու համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2022/84 ընթացակարգի շրջանակներում 07.03.2022թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ՆԳ-2022/84 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2022/84 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Սոնիկ Աթայանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ա/Ձ Սոնիկ Աթայանին 6-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

3. Ա/Ձ Սոնիկ Աթայանը, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ին ուղղված գրությամբ հայտնել է, որ անձնական և ֆինանսական խնդիրների պատճառով չի կարող կնքել պայմանագիր:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.02.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Սոնիկ Աթայանը 03.02.2022թ. գրությամբ հրաժարվել է պայմանագիր կնքել և որոշում կայացրել հաջորդաբար 2-րդ տեղ զբաղեցրած «Գոռա» ՍՊԸ-ին 6-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելու վերաբերյալ, ինչպես նաև միջոցներ ձեռնարկելու Ա/Ձ Սոնիկ Աթայանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

5. Ընթացակարգի շրջանակներում մեկ այլ մասնակցի՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 25.01.2022թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք, որի վերաբերյալ հայտարարությունը www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) հրապարակվել է 26.01.2022թ.:

6. Ներկայացված բողոքը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ.Օհանյանի 24.02.2022թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/14 որոշմամբ բավարարվել է մասնակիորեն, մասնավորապես՝ 1-ին կետով որոշում է կայացվել պարտավորեցնել «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնելու թիվ 4 արձանագրությունն ամբողջությամբ:

- ընդունել միաժամանկյա բանակցություններ հրավիրելու մասին համապատասխան որոշում:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 28.02.2022թ. թիվ 26/26-1/3411-2022 գրությունը, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի 04.02.2022թ. թիվ 4 և 18.02.2022թ. թիվ 6 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված

ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Սոնիկ Աթայանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.01.2022թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ որոշում է կայացվել Ա/Ձ Սոնիկ Աթայանին 6-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու և անգործության ավարտից հետո հրավերով նախատեսված կարգով վերջինիս հետ պայմանագիր կնքելու վերաբերյալ:

Ա/Ձ Սոնիկ Աթայանը, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ին ուղղված գրությամբ հայտնել է, որ անձնական և ֆինանսական խնդիրների պատճառով չի կարող կնքել պայմանագիր:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.02.2022թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ Ա/Ձ Սոնիկ Աթայանը 03.02.2022թ. գրությամբ հրաժարվել է պայմանագիր կնքել և որոշում կայացրել հաջորդաբար 2-րդ տեղ զբաղեցրած «Գոռա» ՍՊԸ-ին 6-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելու վերաբերյալ, ինչպես նաև միջոցներ ձեռնարկելու Ա/Ձ Սոնիկ Աթայանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ընթացակարգի շրջանակներում մեկ այլ մասնակցի՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ի կողմից 25.01.2022թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է բողոք, որի վերաբերյալ հայտարարությունը Տեղեկագրում հրապարակվել է 26.01.2022թ.:

Ներկայացված բողոքը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ.Օհանյանի 24.02.2022թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/14 որոշմամբ բավարարվել է մասնակիորեն, մասնավորապես՝ 1-ին կետով որոշում է կայացվել պարտավորեցնել «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

- դադարեցնելու թիվ 4 արձանագրությունն ամբողջությամբ:
- ընդունել միաժամանկյա բանակցություններ հրավիրելու մասին համապատասխան որոշում:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:

Մինչդեռ՝ սույն ընթացակարգի փաստական հանգամանքների ուսումնասիրության արդյունքում հարկ եմ համարում արձանագրել, որ Պատվիրատուն ներկայացված բողոքի հիման վրա Ընթացակարգի կասեցված լինելու պայմաններում (26.01.2022թ.-28.02.2022թ.) 04.02.2022թ. ժամը 10:00-ին հրավիրել է գնահատող հանձնաժողովի նիստ, որի ընթացքում արձանագրել է, որ Ա/Ձ Սոնիկ Աթայանը 03.02.2022թ. գրությամբ հրաժարվել է պայմանագիր կնքել և որոշում կայացրել հաջորդաբար 2-րդ տեղ զբաղեցրած «Գոռա» ՍՊԸ-ին 6-րդ չափաբաժնի մասով հաղթող մասնակից ճանաչելու վերաբերյալ, արդյունքում խախտելով Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իմպերատիվ պահանջը:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի 24.02.2022թ. թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/14 իրավապարտադիր որոշմամբ դադարեցվել է թիվ 4 արձանագրությունը, որի համաձայն Ա/Ձ Սոնիկ Աթայանը ճանաչվել էր առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով:

Նման պայմաններում գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել Ա/Ձ Սոնիկ Աթայանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 28.02.2022թ. թիվ 26/26-1/3411-2022 գրությամբ Ա/Ձ Սոնիկ Աթայանին գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**